# Թեստ կերպարվեստից և կիրառական արվեստից

## Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Գործնական աշխատանքը կատարեք գործնական աշխատանքի համար հատկացված թերթիկի վրա: Գործնական աշխատանքը (առաջադրանք 26) կատարելու համար Ձեզ բաժանել են մատիտ, ռետին և սրիչ:

Գործնական առաջադրանքի համար հատկացված թերթիկի վրա աշխատեք մատիտով: Մատիտ թույլատրվում է գործածել միայն այս առաջադրանքը կատարելու համար:

**Թեստի առավելագույն միավորն է՝ 60:**

**Թեստի վրա աշխատելու համար տրվում է 4 ժամ:**

**Մաղթում ենք հաջողություն :**

**№ 1-19 առաջադրանքների հրահանգ –** (Յուրաքանչյուր ճիշտ պատասխան ՝ 1 միավոր)- Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Ընտրված պատասխանը տեղափոխեք պատասխանների թերթիկի վրա հետևյալ կերպ. պատասխանների համապատասխան վանդակում դրեք X նշանը: Ոչ մի ուրիշ նշում ՝ հորիզոնական կամ ուղղաձիգ գծեր, շրջագծում և այլն, համակարգչային ծրագիրը չի ընկալում: Եթե ցանկանում եք պատասխանների թերթիկի վրա պատասխանը ուղղել, ամբողջությամբ ներկեք վանդակը, որտեղ դրել եք X նշանը և հետո նշեք պատասխանի նոր տարբերակը (դրեք X նշանը նոր վանդակում): Հնարավոր չէ երկրորդ անգամ ընտրել այն պատասխանը , որն ուղղել եք:

(1) **1. Ո՞րն է վրաց քրիստոնեական ճարտարապետության մեջ ներգծված խաչի տիպի ճարտարապետության նմուշը:**



ა) Սվետիցխովելին,

ბ) Նիկործմինդան,

გ) Ալավերդին,

დ) Ջվարին:

(1) **2. Ո՞վ է լուսանկարում ներկայացված քանդակային կոմպոզիցիայի հեղինակը:**



ա) Անտոնիո Կանովան,

բ) Լորենցո Բերնինին,

գ) Միքելանջելո Բուոնարոտտին,

դ) Օգյուստ Ռոդենը:

(1) **3. Ո՞ր տաճարի ձևավորման համակարգում է ընդգրկված լուսանկարում ներկայացված դեկորատիվ կոմպոզիցիան:**



ա) Գելաթիի,

բ) Սվետիցխովելիի,

գ) Սամթավրոյի,

դ) Սամթավիսիի:

(1) **4. Որոշեք, ո՞ր հայտնի կառույցն է ներկայացված լուսանկարի վրա։**



ա) Բուդապեշտի խորհրդարանի շենքը,

բ) Սանտա Մարիա դել Ֆյորեի տաճարը,

գ) Պալացո Դուկալեն,

դ) Վերսալը։

(1) **5. Ճարտարապետական ո՞ր տիպին է պատկանում նկարում ներկայացված եկեղեցու հատակագիծը:**



ա) Եռակոնք,

բ) Քառակոնք,

գ) Ազատ խաչ,

դ) Բազմաբսիդ:

(1) **6. Ո՞վ է լուսանկարի վրա ներկայացված նկարի հեղինակը:**



ա) Լադո Գուդիաշվիլին,

բ) Մերաբ Աբրամիշվիլին,

գ) Իրակլի Գամրեկելին,

դ)Սերգո Քոբուլաձեն:

(1) **7. Տրված հատվածի համաձայն նշե՛ք արվեստի նմուշի հեղինակի անունը.**



ա) Լորենցո Գիբերտի,

բ) Ֆիլիպո Բրունելեսկի,

գ) Ալբերտո Ջակոմետտի,

դ) Անդրեա դել Վերոկկիո:

(1) **8. Ո՞ր դարաշրջանի և/կամ գեղարվեստական հոսանքի նմուշ է ներկայացված տրված նկարի վրա:**



ա) Գոթիկայի,

բ) Կլասիցիզմի,

գ) Բարոկկոյի,

դ) Ռոմանտիզմի:

(1) **9. Ո՞ր առանձնահատկությունն է բնորոշ վաղ քրիստոնեական շրջանի վրացական որմնանկարչությանը:**



ա) Պատկերը հարթային  է, ուրվագծային նկարը կոպիտ և անկյունավոր, պատկերների համամասնությունները խախտված, պատկերի ձևերը հասարակ, պարզունակ և արտահայտիչ:

բ) Կոմպոզիցիան ազատ և դինամիկ է, նկարը կատարելագործված, համամասնական և պլաստիկ, ձևերը ռեալիստական և ընդհանրացված, կոմպոզիցիան զուրկ է մանրակրկիտ պատմողականությունից:

գ) Կոմպոզիցիան բազմապատկեր է, նկարը դինամիկ և բեկոտված, պատկերները չափազանցված, ձևերը գեղանկարչորեն մոդելացված, ստեղծվում է տարածության պատրանք, կոմպոզիցիայի պատմողականությունն ընթանում է մանրամասնություններով:

դ) Պատկերը կոպիտ է և պաձուձազարդ, կոլորիտը  աղքատիկ, կոմպոզիցիաները չափից ավելի դեկորատիվ, մոնումենտալ գեղանկարչությունն իր բնույթով մոտ է  սրբանկարչությանը:

(1) **10. Ո՞ր գեղարվեստական յուրահատկություններով է բնութագրվում ներկայացված ռելիեֆը:**



ա) Ռելիեֆային կոմպոզիցիան ներկայացնում է անատոմիայի գիտելիքների հիման վրա ստեղծված մարդկանց ծավալային պատկերները:

բ) Ռելիեֆային կոմպոզիցիան հարթագծային է, պատկերների համաչափությունները խախտված են և էքսպրեսիվ:

գ) Կոմպոզիցիայի դինամիզմը ստեղծվում է վարագուրման  պատկերման յուրահատկություններով:

դ) Պատկերների դեմքերը իրատեսական են, վարպետը ներկայացնում է կերպարների դիմանկարային բնութագրում:

(1) **11. Ի՞նչ է մարմնավորում Ցակոբ Լոուրենսի գեղանկարչական կոմպոզիցիան «Միգրացիա» շարքից:**



ա) Սոցիալական իրավիճակը,

բ) Իրար նմանակող մարդկանց ողբերգական ճակատագրերը,

գ) Մարդկանց հոգեբանական տեսակները,

դ) Մարդկանց կողմից միմյանց աջակցելը:

(1) **12. Ո՞ր գեղարվեստական առանձնահատկությունը** ***բնորոշ չէ*** **ներկայացված արվեստի նմուշին:**



ա) Դեկորատիվ զարդարանքի համաչափ, հավասարակշռված բնույթ,

բ) Ցվարայի տեխնիկայով ստեղծված դեկորատիվ զարդարանք,

գ) Պատկերավոր պատկերներ,

դ) Քանդակադրոշմի զարդանախշի բազմազանություն:

(1) **13. Ո՞ր գեղարվեստական հոսանքին է պատկանում ներկայացված արվեստի նմուշը:**




ա) Ֆուտուրիզմին,

բ) Ֆովիզմին,

գ) Ար-Նուվոյին,

դ) Փոփ արտին:

(1) **14. Ո՞վ է Ասամբլեայի պալատի (Չանդիգարխ) ճարտարապետը:**



ա) Զահա Հադիդը,

բ) Ֆրենկ Լլոյդ Ռայթը,

գ) Նորման Ֆոսթերը,

դ) Լե Կորբյուզիեն:

(1) **15. Ո՞ր գեղարվեստական հնարքը *բնորոշ չէ* Վան Գոգի «Աստղալից գիշեր» նկարին:**



ա) Վառ  ֆակտուրային վրձնահարվածները,

բ) Կինոկադրի նմանատիպ  կոմպոզիցիան,

գ) էքսպրեսիայի և հանգստության տանդեմը,

դ) Մոդելավորված ձևը:

(1) **16. Ներկայացված արվեստի նմուշի դետալի համաձայն նշե՛ք ստեղծագործության հեղինակի անունը:**



ա) Անրի Մատիս,

բ) Պաբլո Պիկասո,

գ) Խուան Միրո,

դ) Էդվարդ Մունկ:

(1) **17. Որոշեք, որո՞նք են նկարիչ Ջակոմո Բալլայի նկարը ստեղծելու համար կիրառված հիմնական արտահայտչական միջոցները:**



ա) Ռիթմ և շարժում,

բ) Ձև և հեռանկար,

գ) Հեռանկար և հավասարակշռություն,

դ) Համաչափություն և ամբողջականություն:

(1) **18. Թվարկացանկում ո՞րը *<u>չի հանդիսանում</u>* կերպարվեստի միջոց (տարր):**

ա) Գույն,

բ) Ոճ,

գ) Ձև,

դ)Լուսավորում:

(1) **19. Ո՞ր գեղարվեստաոճային յուրահատկություններով է բնութագրվում նկարում ներկայացված վրաց միջնադարի քանդակադրոշմի (չեկանկա) արվեստի նմուշը:**



ა) Բարձր ռելիեֆով կատարված համաչափ կոմպոզիցիայում ֆիգուրային պատկերը ծավալային է, թեև համամասնական չէ:

ბ) Բարձր ռելիեֆով կատարված քանդակային պատկերի և կատարելագործված զարդանախշային մոտիվների համադրությամբ վարպետը հիանալի նմուշ է ստեղծում:

გ) Գծային, դեկորատիվ բնույթի ցածր ռելիեֆով կատարված պատկերները առանձնանում են չափազանցված ձևերով:

დ) Բարձր ռելիեֆով կատարած գոտկատեղից վերև երկարավուն պատկերներին ձևերի չափազանցումն ավելի սեթևեթություն է հաղորդում, քան արտահայտչականություն:

**№ 20-25 առաջադրանք (յուրաքանչյուր ճիշտ պատասխանը՝ 1 միավոր): «Ճշմարիտ է - Սխալ է»**

**Առաջադրանքի հրահանգ–**ուշադիր ծանոթացե՛ք տրված դրույթներին, եթե համարում եք, որ դրույթը ճիշտ է, ապա նշե՛ք համապատասխան վանդակը: Նման դեպքում մեկնաբանություն չի պահանջվում: Եթե համարում եք, որ դրույթը սխալ է, ապա նշե՛ք համապատասխան վանդակը և հատուկ հատկացված տեղում գրե՛ք ճիշտ ձևակերպումը:

**Դիտողություն.** Եթե կարծում եք, որ ձևակերպումը սխալ է և գտնում եք, որ վկայության մեջ տրված պարզաբանումը ինքնին ճիշտ է ձևավորված, թեև չի ներկայացնում տրված տերմինի և/կամ բառի բացատրությունը, ապա անփոփոխ թողե՛ք պարզաբանումը և այդ նույն պարզաբանման համար փնտրե՛ք և համապատասխանեցրե՛ք համարժեք տերմին և/կամ բառ:

**Նմուշ.**



(1) **20. Նկարում ներկայացված քանդակը գեղարվեստական առանձնահատկություններով կարող ենք դասել արևելյան արվեստի նմուշներին:**



(1) **21.** «Սկավառականետորդի» բարդ շարժումը և լարվածությունից ձգված, մկանոտ մարմինը վկայում է, որ քանդակի հեղինակն է Պրաքսիտելեսը:



(1) **22. Կապելլան փոքր չափի մատուռ է:**

(1) **23. Շինության ներսում գտնվող բացօթյա բակը, որը որոշ դեպքերում սահմանագծված է սյուններով, կոչվում է գավիթ (ատրիում):**

(1) **24.** Դուչենտոյի և Տրեչենտոյի՝ Պրոտոռենեսանսի (նախավերածնունդ) դարաշրջանում ակնհայտորեն դրսևորվում են դասական արվեստի արդեն լավ մշակված գեղարվեստական առանձնահատկությունները՝ հավասարակշռված, եռանկյան մեջ ներգծված կոմպոզիցիոն կառուցվածք, համաչափություն, ընդհանրացված, կատարելագործված ձևեր, տարածության և ծավալի համոզիչ փոխանցում:

(1) **25. Բարոկկոյի դարաշրջանի տաճարների ճակատներն առանձնանում են  անպաճույճ և զուսպ դեկորատիվ զարդարանքով:**

(7) **№ 26 Առաջադրանք.** *Գործնական աշխատանք*

**Հրահանգ.** Լուսանկարներում ներկայացված առարկաների համաձայն ստեղծեք երեք պատկերով մեկ նատյուրմորտ: Նախատեսելով կոմպոզիցիոն բաշխման սկզբունքները պատկերը տեղադրեք նկարի հարթության վրա: Պահպանեք առարկաների համապատասխան համամասնությունները, հաղորդեք նրանց ֆակտուրա և ծավալ, ընկած ստվերներն ու արտացոլանքները պատկերելիս որոշեք լույսի ուղղությունը: Առաջադրանքը կատարեք գործնական աշխատանքի համար հատկացված թերթիկի վրա:





(1) **№ 27-29 Առաջադրանք.** *Ժամանակագրության որոշում:*

**Առաջադրանքի հրահանգ –** դասավորե,ք (հնագույնից մինչև նորագույն) գեղարվեստական հոսանքները, նկարիչներին, ճարտարապետական և կերպարվեստի նմուշներն, ըստ դրանց ստեղծման ժամանակի: Պատասխանները գրառե,ք պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում: Նկատի ունեցեք, որ աղյուսակում գրվում է միայն ընտրած միավորի համապատասխան թվանշանը:

(1) **27. Դասավորե՛ք նկարներն՝ ըստ դրանց ստեղծման ժամանակի.**

**1.**



**2.**



**3.**



**4.**



(1) **28. Դասավորե՛ք ներկայացված ճարտարապետական նմուշներն՝ ըստ դրանց ստեղծման ժամանակի.**

**1.**



**2.**



**3.**



**4.**



(1) **29. Ժամանակագրական հաջորդականությամբ դասավորե՛ք Դանայայի թեմայով ստեղծված արվեստի նմուշները.**

**1.**



**2.**



**3.**



**4.**



(3) **№ 30 Առաջադրանք. Համապատասխանության որոշում**

**Առաջադրանքի հրահանգ –** A սյունակում թվարկված նկարիչներին համապատասխանեցրեք B սյունակում ներկայացված ջրաներկի տեխնիկայով նրանց ստեղծած բնանկարները: Հաշվի առեք, որ մեկ նկարչին համապատասխանում է միայն <u>մեկ նմուշ</u>:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **A** | 1. Պաուլ Կլեե | | 2.Դավիթ Կակաբաձե | | 3. Պոլ Սեզան |
| **B** | ა  | ბ.  | გ.  | დ.  | ე.  |

(3) **№ 31 Առաջադրանք. Համապատասխանության որոշում**

**Առաջադրանքի հրահանգ –** A սյունակում տրված գեղարվեստական հոսանքներին համապատասխանեցրեք B սյունակում տրված նկարների դետալները: Ուշադրություն դարձրեք նկարելու ոճի առանձնահատկություններին: Հաշվի առեք, մեկ հոսանքին համապատասխանում է միայն <u>մեկ նմուշ</u>:

| A | B |
|---|---|
| 1. Հյուսիսային Վերածնունդ<br>2. Պոստիմպրեսիոնիզմ<br>3. Իմպրեսիոնիզմ | ა.  ბ.  გ.  დ. <br>ე.  |

## Գրավոր առաջադրանքների հրահանգ

Ուշադիր ծանոթացե՛ք առաջադրանքներին և ըմբռնե՛ք դրանք:
Աշխատանքը կատարեք դյուրըմբռնելի ձեռագրով: Այն հատվածները, որոնք դժվար ընկալելի են, չեն ստուգվի և գնահատելիս չեն նկատառվի:
Գրավոր աշխատանքներին կից ներկայացված են ցուցումներ: Այդ ցուցումներին պետք է պատասխանեք այնպես, որ աշխատանքն իմաստային տեսանկյունից լինի ամբողջական, խուսափեք հարցերին տրված մեխանիկական պատասխաններից:
Ձեր կարծիքը ձևակերպեք պարզ, հստակ և հիմնավորված: Աշխատանքը կգնահատվի, նրանում դրսևորված փաստարկման (սեփական կարծիքն օրինակներով հիմնավորելու) և ինքնուրույն մտածողության ունակության համաձայն:
Դատողությունը պետք է լինի տրամաբանական, միտքը հասկանալի արտահայտված:
Տեղափոխեք աշխատանքը պատասխանների թերթիկի վրա:
Պատասխանների թերթիկում թույլ տրված սխալի վրա ուղղակի գիծ քաշեք, չի թույլատրվում առնել փակագծերի մեջ կամ խազմզել:

(4) **№ 32 Առաջադրանք.**

**Առաջադրանքի հրահանգ** – Արվեստի որոշ նմուշներ մտածված են, որպես  հունական դիցաբանությունից տարբեր սիրային սյուժեների մեկնաբանություն: Տրված ստեղծագործություններից ընտրե՛ք արվեստի նմուշներից մեկը և կապակցե՛ք այն կոնկրետ սյուժեի հետ: Վերլուծե՛ք ստեղծագործությունն ու որոշե՛ք՝

**1.**



**2.**



**3.**



**4.**



**ա.** Ո՞ր արտահայտչական և կոնտեքստուալ առանձնահատկությունն է բացահայտում այս ստեղծագործության կապը ձեր կողմից նշված սյուժեի հետ:

**Յ.** Ո՞ր գեղարվեստական հնարքների միջոցով է արտահայտում հեղինակը ստեղծագործության գաղափարը:

(15) **№ 33 Առաջադրանք.** *Արվեստի նմուշի նկարագիր-վերլուծություն:*

**Առաջադրանքի հրահանգ –** Ըմբռնե՛ք, վերլուծե՛ք և գնահատե՛ք ստորև ներկայացված արվեստի նմուշը.



**Կատարեք առաջադրանքն, ըստ ցուցումների.**

(3) **33.1** Նկարագրե՛ք և բնութագրե՛ք կոմպոզիցիան, ո՞ր ժանրին է պատկանում տրված կոմպոզիցիան: Նյութի և տեխնիկայի հիման վրա որոշե՛ք, թե կերպարվեստի ո՞ր ճյուղի նմուշն է ներկայացված:

(3) **33.2** Վերլուծե՛ք և համառոտ ձևակերպե՛ք, թե կերպարվեստի ի՞նչ արտահայտչամիջոցներ ու հնարքներ է կիրառում հեղինակը նկարի վրա գեղարվեստական կերպարի բնույթ ստեղծելու համար:



(3) **33.3** Գեղարվեստաոճական բնութագրիչների հիման վրա որոշե՛ք ստեղծագործության ստեղծման ժամանակը, ո՞ր երկրի արվեստի նմուշն է ներկայացված, նշեք հեղինակի անունը:

(3) **33.4** Գնահատե՛ք աշխատանքը՝ արտահայտեք Ձեր վերաբերմունքը, քննարկե՛ք և հիմնավորե՛ք Ձեր կարծիքը:

(3) **33.5** Դատողություններ արե՛ք ազդեցությունների շուրջ, քննարկե՛ք ստեղծագործությունը պատմամշակութային և այլ համատեքստերում: